

Ժ. ՊԼՈՒՆ

Մաթիկին համար այս մարդացումը (ժողովուրդինն է այս երանգը, որ այնքան ճիշդ կը լուսաւորէ հոգեկան այդ տնկուածքը, բառը առնելով հին իմաստով) անփոխարինելի բարիք էր անոր հունէն ելած, անկապակից անհատականութեան, վասնզի կը դնէր վերջ մը անոր տարակոյսներուն, իմացական միգամածութեան: Երբ նոր կը մտնենք երիտասարդութենէն ներս, կը հաւատանք մեր ներակերտ վստահութեան: Կեանքը զայն կը քայքայէ այնքան արագ: Մինչեւ նորի մը ճարտարա՛նքը: Չէզոք գօտին՝ մեր օրերուն: Վասպուրականէն ու Մուշէն այնքան մռայլ հոգեբանութեամբ բաժնուած խակ ընկերվարականը, որ կը հաւատար նոր աւետարանին այնքան խոր եռանդով (այս եռանդին դէպի միւս մեծ հոսանքը, որ մանր ցեղերուն ջնջումը ունի նկատի, դիւրացնելու համար մարդկային եղբայրութեան ապագայ օրը, ճամբան՝ թէեւ քիչ, բայց դժուարին է շատ: Մաթիկը չունեցաւ համարձակութիւն իր վճիռը բանաձեւելու, երբ զինքը կանչեցին ընելու ատիկա, ազգերու ապագայ միատարր ընտանիքին մէջ, մեր տեղին վերաբերմամբ: Բայց չէր նեղուեր այս խօսակցութեան խռովքէն: Ու կործանարար